Հավելված N 2
ՀՀ կառավարության 2023 թվականի
հունվարի 12-ի N 37-Ն որոշման

Ը Ն Թ Ա Ց Ա Կ Ա Ր Գ

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՏԵՂՈՐՈՇՄԱՆ ԿԱՊԱՐԱԿՆԻՔՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՄԲ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՓՈԽԱԴՐՄԱՆ ՀԵՏԱԳԾԵԼԻՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԱԶԳԱՅԻՆ ՕՊԵՐԱՏՈՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ

1. Սույն ընթացակարգով կարգավորվում են համաձայնագրի 4-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան՝ ազգային օպերատորի ընտրության հետ կապված հարաբերությունները:

2. Մրցույթը կազմակերպում և անցկացնում է հանձնաժողովը, որը սահմանում է մրցութային փաստաթղթերը, իրականացնում է մրցույթի արդյունքների գնահատումը և ամփոփումը:

3. Մրցույթի անցկացման վերաբերյալ հայտարարությունը մրցույթի անցկացման օրվանից առնվազն 10 աշխատանքային օր առաջ հրապարակվում է Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում՝ http://www.azdarar.am:

4. Մրցույթի մասնակիցները ներկայացնում են մրցութային հայտեր՝ հանձնաժողովի սահմանած և մրցույթի անցկացման վերաբերյալ հայտարարությամբ նախատեսված անհրաժեշտ փաստաթղթերին համապատասխան:

5. Մրցույթն անցկացվում է մասնակիցների կողմից ներկայացված հայտերի՝ մրցույթին մասնակցության համար սահմանված փաստաթղթերի ուսումնասիրության և ազգային օպերատորին ներկայացվող պահանջներին համապատասխանության գնահատման միջոցով:

6. Մրցութային հայտերն ստանալու օրվան հաջորդող 2 աշխատանքային օրվա ընթացքում դրանք հանձնաժողովի քարտուղարի կողմից ներկայացվում են հանձնաժողով՝ ուսումնասիրության և գնահատման համար:

7. Հանձնաժողովը հայտերն ստանալու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում իրականացնում է մասնակիցների կողմից ներկայացված հայտերի ուսումնասիրություն և ազգային օպերատորին ներկայացված պահանջներին համապատասխանության գնահատում:

8. Հանձնաժողովը ներկայացված հայտերի ուսումնասիրությունից և ազգային օպերատորին ներկայացված պահանջներին համապատասխանության գնահատումից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում ամփոփում և հրապարակում է մրցույթի արդյունքները: Վերահսկող մարմինը մրցույթի արդյունքների հրապարակմանը հաջորդող 3 աշխատանքային օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ է ներկայացնում ազգային օպերատոր սահմանելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

12.01.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ